

գեղեցիկ վկայութիւններ կը բովանդակեն Պետրոսի և Հոռոմայ եկեղեցւոյ գլխաւորութեան վրայ, որով հարկ է Չ գարու երկասիրութիւն համարել զանոնք: Հետեւաբար գրեթէ Եղիշեայ ժամանակակից կրօնան ենթադրուի, և կարելի է ևս հետևեալ ապացուցական կերպով անոնց հեղինակութիւնը զօրացնել: Վասն զի Յովհաննու մանդակունեայ ճառքն ևս, որոց վաւերականութիւնն նմանապէս երկրայական է, մեծ յարգ ունին, թէ և շատ հին ժամանակի գրուածք գուցէ չհամարուին: Մատենադրաց, ինչպէս Եղեւրկայ բարբառանդայ եպիսկոպոսին, Յովհաննու մանդակունեայ իրրև կաթողիկոսի՝ ունեցած դիրքն հայկական եկեղեցւոյ մէջ, անոնց հեղինակութեան և վկայութեան արժէքը կը բարձրացընեն:

Շարայարեղի

### Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Ք



### Ա

Սուս-Սերեոսի (Սեր. սոյ. Պատկ. էջ 1) պատմութեան սկիզբը՝ այսպիսի հասուած մը կայ. « Եւ եղև ոչ ի կամայական պիտոյից... և և ցուցից համառուաբար գարեկաց ժամաւս նակացս զաղետեցս վերաբերութեան զանս և ս գառոշքս հինգ բազառոշքսն յիշատակեա ղ ղով » :

Այս հասուածք կը կրկնուի միևնոյն ձևով ա միևնոյն էջը երկրորդ անգամ. « Իրոշմեալ ի վերայ վիմի զանս և գառոշքս հինգ բազառոշքսն Հայոց և Պարթևաց » :

Որո՞նք են այս հինգ թագաւորները, այս մասին հեղինակն աւելի բան մը չի յայտներ. ոչ ալ ամբողջ Ա. և Բ. գլխութեան մէջ ուրիշ որ և իցէ հետք մը կայ այսպիսի հինգ թագաւորներու մասին: Իրաւ է թէ յէջ 9 կը յիշուին Արշակ Մեծ և անոր չորս որդիները, բայց ստանք այն հինգ թագաւորներուն հետ յարաբերութիւն չունին: Պատկանեան ևս այս մասին ծածոթութիւն մը չէ աւուած: Թայանապէս հասուածն այսպիսի թիւն կրած է. բնագիրը պիտի լինէր հին բազառոշքսն,

և երկրորդ գրիչ մը հինգ օրինակած է սխալելով: Ինչ որ կը տեսնենք երբ համեմատենք նայն հասուածին երրորդ կրկնութիւնը՝ զարձակ ի նոյն էջ. « Գրեցի ի վերայ արձանին այսորիկ... զամս առաջին բազառոշքսն Հայոց » : Ուր՝ առաջինս = հին:

### Բ

Առձեռն բառարան կը նշանակէ հայ. հուս բառ մը, « վերքի հոսած արիւն, շարաւ, թարախ » նշանակութեամբ: Չենք գիտեր թէ որ գարէն է այս բառը: Կրնայ երկու կերպով մեկնուիլ.

Ա. Կրնայ գալ նիս. բն արմատէն. հմմտ. Սանս. Պնչոյ, Պնչի « հոսիլ, նեխիլ, փլուտիլ » . Պնչոս « հու, շարաւ, թարախ » . Պնչոսնա նոյն նշ. Պնչոի « Շարաւ, հու » (Ա. Վեդ). Պնչոս « նեխահոտ, հոսած » . Պնչոսիկա նոյն նշ.: Չանդ. Պնչ « հոսիլ, նեխիլ, փախիլ » . հմմտ. Վեհդ. Չ. 28. Յեզիձա ահտև ևսասնո ֆրիքիքիտիձա պնչոյտիձա « եթէ այդ դիակը փտաի, նեխի » . պնչիտի « նեխում, փտում » . Վեհդ. Ի. 3. պնչիտիւն անիտյա « դէմ գնել շար աչքի» նեխումի (փտումի), աղտոգութեան » : Բուն. πύον կամ πύον շարաւ, թարախ. Հիպպ. (Գ. դար. Ն. Գ.) πύον նոյն նշ. πύον թարախտիլ. Արիստ. շնչ. 20,3 ևսլին. πύ-θ-ω փտեցնել. Հոմ. Իլ. 4,174. 11, 395. Ոգ. 1,161 ևն. πύθουαι փախիլ, քսածնոն նեխութիւն, կու զան պարզական πύ և անած πύθ արմատէն: Լատ. pūs թարախ. Ուր. puscinus թարախալից. (Nævius Գ. Դար Ն. Գ.) pūrentē թարախտ. շարաւալից. pūteo, ere հոսիլ, թարախտիլ. Կիկ. Ուր. pūter թարախ, հու. Ուրիդ. ևսլին: Գոթ. ful-s, Գերմ. faulen, Fäulniss նեխիլ, փտում. Լիթ. pū-v-ū փախիլ. pū-lei հու, թարախ:

Բ. Եթէ սակայն բառը յետին է, կրնայ գալ նաև ուղղակի պարս. քս հու « թարախ, հու » բառէն. հմմտ. این جراح است و این جراح است Կերքէ հու կապած է, այսինքն մէջը ջուր հաւաքուած. Vullers Lex. Pers.-Lat. :

Գ

Յայտնի է թէ հին հայերենի մէջ ձայնական ոչի և ոչի խումբերը սերտ յարաբերութիւն մ'ունին իրարու հետ. բառ մը որ այսպէս կը վերջանայ՝ կարող է գրուիլ թէ միով և թէ միւսով. բզգտ. և ըռչոյ և նրչոհ ու բոչոյ և բոչոյի :

Չայնախօս Պրօֆ. Պր. P. Passyի հետ քննելով հայերենի այս ձայնական փոփոխութիւնը՝ օրու մասին մեկնութիւն մը չէ տրուած դեռ կարծեմ, ահաասիկ ինչ եզրակացութեանս որ հասանք :

Յայտնի է թէ Հայն ունէր երկու լեզուական տառ՝ չ և ի. առաջինը կ'արտասանուէր բերնին առջևի կողմը՝ ինչպէս այսօրուան լոչա, չոս և այլն բառերուն մէջ. իսկ երկրորդը կը հնչուէր աւելի ետև՝ դէպ ի կոկորդը. հմմտ. ռուսական կամ յունական լը : Պարզ է թէ այս երկրորդ լը եթէ փոքրիկ շարժում մը, փոքրիկ տեղափոխութիւն մըն ալ կրէր, պիտի իյնար կոկորդի սահմանին մէջ՝ որով պիտի վերածուէր կոկորդականի : Այս շարժումը պատահած է հայերենի մէջ, այնպէս որ բոլոր այդ երկրորդ չ գրերուն դէմ այսօր կը գտնենք կոկորդական զը :

Այս գիտնալ վերջ՝ տեսնենք թէ դժուարութիւն մը կայ ոչի և ոչի ձևերուն արասանութեան մէջ՝ որ պատճառած ըլլայ մէկուն կամ միւսին փոփոխութիւնը : Չայնախօսութիւնը այդպիսի դժուարութիւն մը չի տեսներ այդ երկու խումբերուն մէջ. ոչ ալ հայերէնը նեղուած կ'երևայ անոնցմէ, որովհետև անխտիք երկու ձևերէն ալ առատօրէն ունի. հմմտ. կոյ, փոյ, գոյ, ձոյ — բոյլ, թոյլ, զոյլ, սոյլ, ձոյլ, և այլն : Ուրեմն փոփոխութեան պատճառը պէտք է փնտռել չէ՞ թէ այդ երկու ձևերուն, այլ անտեցմէ տարբեր ձևի մը մէջ՝ որ իր դժուարութեանը պատճառով ինկած և ծագում տուած է մեր ներկայ երկու ձևերուն :

Արդ, հնագոյն այդ ձևը կամ ոչ էր և կամ ոչի :

Մական ո՛չ ալ այս ոչ ձևը կրնար նեղել հայերէնը՝ քանի որ ունիւնք զոյ (զօլորչի),

զօլ (լինել), — մնլ (գինեմնլ և այլն), թէ և ոչ միւսներուն շփ առատ : Հետևաբար կը մնայ մեզի ոչի ձևը :

Ինչպէս պիտի հնչուէր այդ խումբը. — իներանը օ արտասանելու համար իր յատուկ ձևն առնել վերջ՝ լեզուն պիտի առաջ մը զուէր արտասանելու համար յ տառն, և իսկոյն ես պիտի քաշուէր՝ մինչև խորը՝ արտասանելու համար կոկորդական կը : Այս անշուշտ երկար աշխատութիւն մըն էր լեզուին համար ձայնախօսօրէն. դիւրագոյն միջոցն էր ուրեմն կամ առաջ չմղել լեզուն, և կամ՝ եթէ տառ մը մղուեցաւ՝ ես չքաշել : Առաջին միջոցը կուտայ ոչի և երկրորդը՝ ոչի :

Այս բնական միջոցը որո՞ծած է հայերէնն ալ և հնագոյն ոչի ձևը վերածած է մեր ծանօթ խումբերուն. որով մեր հին լեզուին մէջ ջընջուած է ոչի (= սլ) և հետևաբար այսօր ալ ոչի (= ujbh) :

Դ

Որոնք որ զբազած են հայ և իրանեան բառերու համեմատութեամբ՝ պիտի յայտնեն թէ նպաստ բառը՝ իրանեան փոխառութեան մը երևոյթն ունի. սակայն յայտնի չէ իրանեան այն բառը որ ծագում տուած է մերինն : կը կարծեմ գտած ըլլալ զայն զանգիկ և հին պարսիկ լեզուներուն մէջ. Չանգիկն ունի Ուչպաստա ձևը « օգնութիւն, նպաստ, օգուտ » որմէ ուչպաստաբառաւ = նպաստամտոյց, օգտակար, նպաստաբեր. (աւելի գէշ մտքով), դարեդոտպաստա = բազմապաշտպան, բազմանպաստ. հմմտ. յօ բազդաշնոս ուչպաստաձա « նա բազուկ և օգնութիւն » (Յշտ. ԺԳ. 99). նո՛ւրբմ մէկ բարս ուչպաստամ « Նպաստ բեր ինձ, օգնէ ինձ » (Յշտ. Ե. 64). յարս մէ բարչըն ուչպաստամ « Ինչպէս որ ինձ բերին նպաստ » (Յշտ. ԺԳ. 1). Նոյնպէս Յշտ. ԺԳ. 36. ԺԵ. 8. Յս. Թ. 101 և այլն :

Նոյնը կայ հին պարսկերենի մէջ Ուչպաստամ ձևով = օգնութիւն, նպաստ, հմմտ.

Առաքանագրամնիյ ուչպաստամ արարա = Արամազդ ինձ նպաստ բերաւ » (Behst. Ա.

25) . միևնոյն նախադասութիւն կրկնուած (թե՛հ. Ա. 55, 87, 94. Բ. 24, 34, 40, 54, 60 և այլն) :

Մասնակրտն ունի նոյն բառը Ռարարս ևնով՝ բայց արբեր իմաստով = ծունկ, սրբ. բան, մակերևոյթ, կայլն :

Բոլոր այս բառերը կու գան Մաս = կե. նալ, կալ արմատէն կազմուած Ռպպ մաս. նիկով. (Տես. J. Darmesteter. Et. Iran. I. Paris. 1883. էջ 304). հմտ. Գերմ. Bei-stand == օգնութիւն, նպաստ, պաշտ. պանութիւն :

Մեր բառը՝ որ յայնպէս կայ ունի ասոնց հետ, կ'ենթադրէ "չի-Ուպա-ստա-մի ձև մը՝ կազմուած եի բայական մասնիկով :

Հրաշխայ Յ. Աձատեան

Փետր. 10, Պ-բ-ի-



### ԻՆՁ ԱՌՆՁՈՒԹԻՒՆ ԿԱՅ

#### ՀԻՆ ՀԱՅԱԶԳԻ ՊԱՆՂԻԿԻԱՆՑ

ԵՒ ԱՅԺՄՈՒ ԿԱԹՈՂԻԿԵ ԲՈՒՂԱՐԱՑ ՄԻՋ

ԼՈՎԱՆՈՑ մէջ կազմուած Սրեշեյան ընկերութեան ձեռքով լոյս տեսնող Հանդես կրօնից. (Revue des religions) կոչուած ուսումնասիրութիւն՝ ասորոյս (1897ի) առաջին համարին մէջ շահագրգիռ յօդուած մի կայ, « Հին Պաղիկեանք եւ արդի կաթողիկէ Բուլղարք Փիլիպպոլոպոլսոյ » վերնագրով. յուլուածագիրն է Dr. E. Tachella, Մոսկիա քաղաքին ազգային թանգարանի հին գրա. մանրա տեսուչն :

Թէ էրբ, որո՞ւ ձեռքով, եւ ի՞նչ միջոցներով սկսաւ եւ տարածուեցաւ Պաղիկեանց աղանդն, ի՞նչ աւերածներ եւ փասանք՝ թէ՛

հոգեկան եւ թէ նիւթական՝ զործեց ամբողջ դարերու շրջանի մէջ մերձակայ ազգաց եւ աշխարհաց, ի՞նչ աղիւսարեք պատերազմներ բրաւ եւ մինչև անգամ մօտալուս վտանգ սպառ. նացաւ բիւզանդական կայսերութեան, իրեն օգնական եւ նեցուկ . ունենալով արարական իշխանութիւնը. եւ փոխադարձաբար, ի՞նչ հաշածանքներ եւ հարուածներ կրեց բիւզանդական զէնքերէ, որոց ազդեցութեամբ մերթ մարեցաւ եւ մերթ գարձեալ արծարծելով գուր ժայլոքեց իւր սպականիչ թոյնը՝ խոթամանգ հրարեի մի նման, եւ թէ ի՞նչ վարդապետութիւններ եւ արարողութիւններ կը բովանդակէր այլ աղանդն. այս բոլորն արդէն ծանօթ են գիտնոց, որոց վերայ կը խօսի համառօտի ներկայ յօդուածս. սակայն կը զանուիւն մէջը ինչ ինչ կէտեր, որ գուցէ ոմանց համար նորք են, եւ այս կէտերուն է որ կ'ուզենք դարձունել ի մասնաւորի մեր ընթերցողաց ուշադրութիւնը : Պաղիկեանց զէմ ի զործ դրուած հաշածանաց մէջ՝ մեծ գեր խաղաղեք է հայազգի Յովհաննէս Ա Չմիկիկ բիւզանդացի կայսրն : Մա երբ տա. կուին զօրալար էր, Աստուածատուր (Թէւ. զորոս) անուամբ հայ ճգնաւոր մի գուշակեր էր իրեն՝ թէ ժամանակաւ կայսր պիտի լինէր . եւ երբ յիրաւի կատարուեցաւ զուշակութիւնն եւ կայսր եղաւ (յամին 969 զեկա. 11ին), — սպաննելով իւր համազգի Նիկեոսիք Փոկաւր, — ազելով վարձատրել ճգնաւոր, Անտիոք քաղաքին պատրիարք դրաւ : Աստուածատուր պատրիարքն եւս ուզելով ազատել իւր հայրենիքը Պաղիկեան կոչուած աղանդաւորաց ձեռքէն, խնդրեց կայսերէն որ հալածէ զանոնք յարեւմուտս եւ անմարդի տեղեաց մէջ բնակեցընէ . որոնք բռնի ստիպուելով ելինէլ այն կողմերէն՝ գնացին եւ Փիլիպպոլոպոլսի քաղաքին մէջ հաստատուեցան : Մոյն Պաղիկեան աղանդաւորք բոլորն այլ հայազգի էին եւ Հայաստանէն գնացին, ինչպէս կը վկայեն բիւզանդացի պատմիչք : Չմիկիկէն մէկ դար յառաջ եւ աւելի, յամս 853-856, Արքշիւս Միքայէլ Գ կայ-

1. Les anciens Pauliciens et les modernes Bulgares catholiques de la Philippopolitane.

1. Հմտ. Cedrenus, Hist. compend. p. 665 C.